

Փոքրն Հայաստան ուսումնական դիտութիւններ ու քննութիւններ ընելու համար, ուսկից հաւաքեց ու բերաւ 'ի դարձին 80 յունական անտիպարձանագիրներ, թրծեալ աղիւսէ փոքրիկ արձաններ, և ուրիշ զանազան հնութիւններ, զորս գտաւ հնոյն Ցարսոնի աւերակաց մէջ, որք և զրուած են Բարիզուլ լուվրի թանգարանին մէջ առանձին ապակափեղկով, և կոչեցեալ յանուն լանկլուայի: Իր ճանապարհորդութեանց մէջ ըրած դիտողութիւնները չորս հատոր գրուածով հրատարակեց 1854—1864:

Այսպէս համառօտ մը նշանակելով վերջ տամբ կենսագրութեան վիկտոր Լանկլուայի գաղղիացւոյ, մարդասէր, գրասէր, արևելասէր և մանաւանդ հայասէր անձին: Իր մահուամբը գաղղիան կորոյս իր անթիւ գրաւոր անձինքներէն մին, բայց մեր Հայոց ազգը կորոյս Եւրոպացցոց մէջ իր անունը հըռչակող առաջին հայասէր անձը:

ԽԱՐԹՈՒՄ

Երբոր Աբեննար Նուպիոյ մէջ անկախ վարչութեան մը իշխանանիստ քաղաք ըլլալէն դադրեցաւ, սկսաւ չուտով անշրանալ, և անոր տեղյաջորդելով Խարթում՝ առջինը մոռցնել տուաւ: Իր շինուած տեղն առաջ կը կոչուէր Ռասուլ-Խարթում (Գլուխ Խարթումի), քաղաքն ալ այս անունը առաւ: Իր դիրքն երկու Նեղոսաց միանալու կէտին վրայ, ֆաղոկէլէն և գորտոֆանէն հաւասար հեռաւուրութիւնը, շատ յարմար ըրին իր ընտրութիւնը Եգիպտական Սուտանի մայրաքաղաքը ըլլալու: որով այն երկրին բոլոր վաճառականութեան կեղրոնը և մժերանոցը եղաւ: Երկու Նեղոսներն ալ հարաւային բերքերը հոն կը թափեն, փղի և ձիազետոյ ժանիք, ոնզեղիների եղջիւրներ, խէժ, ոսկեոյ փոշի, ջայլամի փետուրներ և գերիներ. և մեծն Նեղոս այն երկու գետերէն ձևանալով այն վա-

ճառքները կ'իջեցնէ 'ի Միջերկրական ծովը, ուսկից փոխարէն Եւրոպայի բերքեր կը դարձունէ, որք են. բեհեղներ, բամբակեայ կտաւ, չուխայ, վերմակներ, մետաքսեղէններ, վառոդ, ծխախոտ, որիզէ ցքի, շաքար, բրինձ, գափէ և համեմունք: Յունաստանի գինիներն ալ բաւական քանակութեամբ կը բերուին հոն: . . .

Թէպէտ և բաց 'ի վերի ըսած նիւթերէն կան նաև ուրիշ զանազան նիւթեր, ինչպէս անսասունք, ցորեան, արմաւ, երկրին կտաւը (որ շատ հասարակ է), 'ի վերայ այսր ամենայնի գուրս խաւրուած վաճառուց բոլոր գումարն երեք միլիոնէ աւելի չելլար. դիւրին կ'ըլլար մինչև քսան միլիոն ալ հանել, եթէ քիչ մ'աւելի խնամք տարուեր բերք հասցընելու:

Եգիպտական Սուտանին ժողովը գեան թիւն է 2 միլիոն, թէ վաչկատուն և թէ հաստատուն. ասոնք երկրագործութեան կը պարապին, անոնք խանարածութեան. և երկիրն այնպէս բարեբեր է որ միայն բերքին տասներորդ մասն բոլոր բնակչաց պիտոյիցը կը բաւէ: Արօրագրեալ երկիրները տարին ինչուան չորս հունձք կու տան: Մսրացորեանը կամտուրան, Սուտանի գլխաւոր բերքն է և մէկ արտէպի (100 քիլո) գրեթէ ֆրանք ու կէս կ'արժէ. որ գահիրէի մէջ 15 ֆրանք կ'արժէ: կով մը 12 ֆուանքի կը ծախուի: Բամբակը անմշակ կ'աճի բոլոր Սուտանի մէջ, բայց անկէ քիչ մաս մը բանի կը բերեն. որ եթէ լաւ մշակուէր, Եւրոպան իր պակասը կրնար լեցընել, և թերևս ալ օր մը այս կողմանէ հիւսիսային Ամերիկայի հարկատու ըլլալէն կը դադրէր: Նոյնն կրնայ ըսուիլ նաև լիղակի և շաքարի եղէգին համար: Լեռանց մէջ երկաթի հանքեր կան, որոնք նոյնպէս անխնամձգուած են, և շինութեան փայտի տեսակներ իրենց տեղը կը փտտին. որ եթէ Նեղոսը ձգուէին՝ շատ հարկաւոր պիտի ըլլային Եգիպտոսի, որ ստիպուած է Եւրոպայէն տախտակներ բերել տալու: Խարթում իրեն այսչափ

արագ ծաղկիլը պարտական է իր գեղեցիկ դրիցը, կարաւաններուն դորձակցութեանը, և բանուկ վաճառականութեանը: 1823Են կանգնուած՝ այսօրուան օրս 30—35,000 բնակիչ ունի, թուրք, Արաբ, բնիկ Սև, առանց համբելու Հրեայ և Յոյն, որոնք բաւական բազմութիւն մը կը կազմեն, և Ղփոխները: Քաղաքը ոչ ամրութիւն ունի ոչ դուռ. իր գրեթէ երեք հազարի չափ պահապանքն Նուպիացի գերիներ և պաշտպուքներ են: Իր ներքին ընդարձակ և բազմաթիւ պարտիզացը պատճառաւ շատ մեծ տարածութիւն մը բռնած է: Փողոցները և հրապարակները փոշոտ, անկարգ և տձեւ են. իրաքանչիւր իր հաւանած տեղը ուղածին պէս շինած է. անօր համար անկարգ և խառնակ են շինուածքն: Բաց ՚ի քանի մը մեծ և լայնագաւիթ տուներէ, մնացած բոլորն ալ խեղճ բաներ են: Հողէ շինուած և քառակուսի, առանց պատուհանի, միայն գռնով, մեծագոյն մասը միայարկ են և գետնին երեսը, ամենայն սողնոց մերձենալի, ամբողջ ընտանեաց կը ծառայեն և կը կոչուին բանիս: Յարդաշէն հիւղը որ տեղւոյն բնիկ ճարտարապետութիւնն է, և գրեթէ բոլոր Ափրիկոյ մէջ այնպէս է, բուրքուլ կամ բուրկուլ կ'ըսուի, որ լատինացւոց բուրկորիում և իտալացւոց բուրկորիոյ (և Հայոց տաղաւար) ըսածը պիտի ըլլայ: Անձրեսի ժամանակ՝ փողոցները և մանաւանդ հրապարակները ջրշեղջ կը դառնան, ուր բիւրաւոր գորտեր գիշեր ցորեկ կը կարկաջեն, և շատ ախորդելի կ'անցնի անոնց՝ որոնք այս երաժշտութիւնը կը սիրեն, ինչպէս կ'ըսէ Պիլագրէ:

Հասարակաց երկու գլխաւոր շէնքերն են Տիվանը, կամ տէրութեան պալատը և բանդը. գլուխ և ոտք, կատար և կեղրոն ընկերութեան. երկուքն ալ գետին եղերքը, և առաջինք իրենց հնութեամբը: Զեմ յիշեր մզկիթները, վասն զիանոնցմէ աչքիս զարնող չեղաւ. և կը կարծեմ որ մէկ հատէն աւելի չկայ, որ անշուշա կրօնական եռանդի տաքութեան

նշան չէ: Հիւանդանոցները ինչպէս որ կրնար կարծուիլ այնպէս գէշ պահուած չեն, Եւրոպացի բժշկաց խնամքով: Ընդհակառակին զինուորանոցներն շանց դադարներ կամ խողնոցներ կը նմանին: Վառօգանոցը աւելի լաւ շինուած է: Ինծի ըսին թէ հին Սոսաքաղքին աղիւսները նոր քաղքին շինութեանը գործածուեցան: Տաճկաստանի մէջ անսովոր եղած կերպով հոսքաղքէն բաւական հեռու գուրս տեղ մը շինուած են սպանդանոցները, որով շրջապատեալ օդը չապականիր: Գիշատիչ թոշունք անդադար այս ապականեալ մնի կրպակաց վրայ թերենին կը տարածեն և եթէ դիպուածով մէկը անոնց մօտենայ՝ ուրիշ բան չի տեսնար

« Բայց թէ խառնուրդ լոկ սոսկալի, Ձըրձեալ մըոց և ոսկերաց դայռաթաթախ և տղմալի. Պատառ պատառ անդամաթիւ արէնըռուշտ գարշատեալ, Զոր կատաղեալ դըժոխորկոր շանց յիրերաց կորզեն վոհմակը »:

Սակայն և այնպէս այս շուներս մարդիկներէն աւելի բաղդաւոր կը ընանըսութեան ըստիլ, վասն զի որչափ ալ մսին գինը աժան ըլլայ, զոր օրինակ ոչխարին լիտրն 10 կամ 12 հարիւրեակ (Փրանգի), ժողովրդեան մեծագոյն մասը այնպէս խեղճ է որ հազիւ մեծամեծ տօնից օրեր կը ընայ միս ուտել. ինչպէս հարսնիքի թմբիատութեան, թաղման և Պայրամին: Իրենց ապրուստի համար շատ քիչ բան հարկաւոր է, և իրենց պիտոյքը այնպէս չափաւորած է՝ որ ամբողջ ընտանիք մը թէ և բաւական բազմաթիւ ըլլայ, (և պէսք ալ է որ ըլլայ այնպիսի երկրի մէջ ուր աղջիկները 13 տարուան և մանչերը 15 տարուան կը կարդուին), օրը քառասուն հարիւրեկով կամ ամիւր 12 ֆրանքով կ'ապրին: Գահիրէի մէջ իսկ եթէ մէկը իր ծառային մէկ դուրուշ մի, այսինքն 25 հարիւրեակ տայ կերակրոյ համար՝ շատ առատածեռն մարդ կը սեպուի:

Բայց եթէ հոն բնակող Եւրոպացւոց մէջ ընկնաս և իրենց պանդոկներուն, կամ թարգմաններուն ձեռքը, ան ատեն խնդիրն կը փոխուի և ապրուատը աւելի ծանր կ'ըլլայ քան ՚ի Բարիլ:

Վերջապէս Խարթում գեղեցիկ և դիտելու արժանի քաղաք մը չէ։ Այս անապատի մայրաքաղաքին զվարար չնորհքըն է Ափրիկոյ խորը և երկու մեծ գետերուն խառնուելու տեղը ըլլալն . ինչպէս կը լրնար շէն ըլլալ եթէ քաղաքականացեալ և զարգացուցիչ ձեռքի մը տակ ընկնար։ Բայց ինչ կը յուսացուի տեղացիներէն, որոնք մինչև հիմայ բան մը չեն ըրած, և ոչ ալ ընելիք ունին։ Եթէ հարաւային կողմը քանի մը կէտքարգաւաճեր են, ըլլայ ճերմակ Նեղոսի վրայ, ըլլայ կապոյտ Նեղոսի վրայ, այն ալ Եւրոպացւոց ձեռքով եղած է . — և սակայն ինչպիսի Եւրոպացիք։ — Անյագ վաճառականներ, որոնց սիրոն և հոգին ուրիշ զբաղանաց գոց, և միայն իրենց վաճառքը մոտածելու բացուած են . և ամենայն ինչ աչք կ'առնուն իրենց հարըստութիւնը աճեցնելու համար։ Թէպէտ և անարժան ձեռաց մէջ, սակայն վաճառականութիւնն, ինչպէս նաև պատերազմն՝ ի հարկէ գործոց՝ քաղաքականութեան գործիք մ'եղած է։ Մնցելոյն մէջ ասկէ աւելի բան մը տեսնուած չէ, և ոչ ալ ապագային մէջ յուսալի է թէ ըլլայ։

Խարթումի ամենէն մեծ և մէկ հատիկ գեղեցիկութիւնն իր շրջաբոլոր պարտէզներն է, մանաւանդ կապոյտ գետին կողմը, որուն ձախ եզերը բոլորովին ծածկեալ է։ Ումանք ճշմարտիւ շատ գեղեցիկ են, և գժուարին է անոնցմէ լաւ հովանոցներ գտնել, անոր համար անդին են այնպիսի տաք երկրի մէջ։ Այս պարտէզներս սքանչելի պտուղներ կուտան, խաղող, լիմոն, պանան, և ուրիշներէ զատ տեսակ մը անանաս ալ՝ զոր տեղացիք խիշդա կը կոչեն։ Սեխը և ձմերուկը շատ առատ են, մանաւանդ գետոյն քանի մը կղզեաց վրայ, ուր կը տնկեն նաև ծխախոտ։

ԿԱՐՈՒՂԻՍ ՏԻՑԻԵ:

ԲՈՒՍՍԱԿԱՆ ՈՐՈՇԱՆՔ

Երբ գալնան ատեն գետինը ծաղիկներու վերարկուաւ մը կը ծածկուի,

մենք այն ատեն չենք տեսնար բնութիւնը միայն իր գեղեցկութեան պայծառութեամբը, հապանակ իրեն ճոխագասաւորութեամբը։

Ծաղիկը՝ մայրութեան յայտարարն է . յինքն և իրմով լրումն կ'առնու կենաց փոխանցման և վերանորոգման մեծ գաղտնիքը։

Պառողը՝ որորանն է։

Որովհետեւ սահմանուած է ոչ միայն հիւրընկալելու և սնուցանելու, այլ և նորահաս էակը հեռաւոր տեղուանք փոխաղբելու, նաւու պէս առագաստներ ունի, և թռչնոյ նման թեր։ Կան ոմանք ալ որ անանկ ունելիքներ ունին՝ որ մարդկային արուեստագործութիւնը խիստ գժուարաւ կրնայ նմանցնել, և երբ հասուննալու գան՝ կը թռւացնեն զանոնք, և իրենց սերմունքը կը ցրուեն և կամ հրացանի գնտիկներու նման կ'արձըկեն զանոնք՝ իրենց սերմնափակին մէջի հեղանիւթները ճայթեցնելով։

Կան սերմանք որ դարերով ժամանակ դիմանալու ձիրքն ունին։ Կան նաև պըտուղներ որ թռչնոց ստամբուէն կ'անցնին առանց իրենց վերընձիւղիչ յատկութիւնը կորսնցնելու . ուրիշ տեղ փոխադրուելով նորէն կը բողբոջին, և այն որ կարծես թէ մահուան գործի պիտործառայէր, ընդհակառակն կը փոխուի կ'ըլլայ օդային ու կենդանի տեղափոխիչ մը։ Այլք հեղեղներու միջոցաւ կը տեղափոխին . և դարձեալ ուրիշներ՝ անդեայց անցած ժամանակ անոնց բուրդերուն կը կազին ուրիշ տեղ կը ճանապարհողեն։ Օդուն, ջրի, կամ հողումիջոցաւ, սերմանք կը տեղափոխին ու գնտիս բոլոր երեսը կը ցրուին։

Պառողը՝ ծաղկանց բոլոր կեանքը յինքն կը քաղէ . ինքն է գերագոյն ու նուիրական արգասիք մը այն բանին՝ որ առջի բերան միայն զարդի առարկայ մը կ'երևար։

Ինչ հրաշալիքներ չներկայացներ մեղի այդ անդադարելի ծաղկաբերութեան և մայրութեան տեսարանը։ Ծաղիկ և պտուղ . ահաւասիկ ինչ է ամեն